չարէն պահպանուած՝ կարենան ամուր պահել Հայք սուրբ հաւատքը. Ս. Նիկողայոս գմբէթաւոր եկեղեցին 'ի յիշատակ հազարաւոր նահատակաց կոտորելոց 'ի Կէտիկ Ահմէտէ (1473). դարձեալ սրբոց ձիաւոր զօրավարաց՝ Գէորգայ, Սարգսի և Թորոսի, որ 'ի կարեւոր ժամու երապ հանին իրենց բարեխօսութեան ապաւինելոց. և այլ որ մէկը ասեմ, եկեղեցի չա՛ռ, և ամէն մէկը զատ զատ նպատակաւ շինուած։ Ահա այդ սրբաշէն եկեղեցեաց մէջ կը ժողովի հայ ժամասէր ժողովուրդն՝ վերջին պատարագը լսելու, և ապա թողուլ լքանելու այդ տաճարները՝ յանդարձ յօտարութիւն գնալու համար։ Որչափ արցունք, քանի՜ սրտաճմլիկ հառաչանք, որպիսի՜ հրաժարական սրտախօսիկ բարով մնայցներ չեն մրմնջած նոքա, սրբաշէն խորանաց, խաչանիշ սիրելեաց դերեզմանաց... և այլն, և այլն։

Երբոր ժամարարը բեմէն կը ծանուցանէ Հայոց՝ թէ աւարտած է Ս. խորհուրդը, կարող են ելնել գնալ 'ի տաճարէն, «Երթայք խաղաղութեամբ» զրուցելով, անշուշտ ոչ մի, այլ շատեր կոտրած սրտով մտածել են իրենք իրենց. «Ո՞ւր երթանք, որո՞ւ թողունք մեր Ս. Եկեղեցիքը, Լոյս-Պարոն և Ֆռանկուլի նահատակաց շիրիմքը», շատ մարդ սրտեր անշուշտ դող ելած են այդ խաղաղութեան խօսքերէն, շուարել մնացել են թէ ինչպէս թողուն և երթան իրենց հոգեհատոր զաւակաց ոսկերք և նշխարքն այլազգեաց ձեռքը։ — Այլ սակայն կամայ և ակամայ հարկ է գնալ։ — Մի կողմանէ երէցը «Տէր ողորմեա՛» կը մաղթէ, միւս կողմանէ, դպրաց դասն «Ճանապարհ բարի Քրիստոս», տխուր կ'եղանակեն. եկեղեցեաց երէց-